# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/14-1

ք. Երևան «14» հոկտեմբերի 2025 թ.

**Վարչապետի աշխատակազմն ի դեմս դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի,** որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ուլթսորս» ՍՊԸ-ն և «Մոնթե Կորպորեյշն» ՍՊԸ-ն** (Համատեղ գործունեության (կոնսորցիումի 24.09.2025թ. Ա-ՄԿ-03 պայմանագիր) ի դեմս **«Ուլթսորս» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Սարգսյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար համաժողովների կազմակերպման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը** կազմում է **52 560 000 (հիսուներկու միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 և N1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Քանի որ պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Աութսորս» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 | ք. Երևան, Սարմենի փող. 1, 2/1 տարածք |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ |
| Հ/Հ 900011032340 | Հ/Հ 163007079839 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 02639627 |
| ---------------------------------------- (ստորագրություն) | ---------------------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*« 14 » հոկտեմբերի 2025 թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/14-1 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 79951112/2 | Համաժողովների կազմակերպման ծառայություններ, համաձայն կից Հավելված N 1.1-ի | դրամ | 52 560 000 | 1 | Համաձայն տեխնիկական բնութագրի | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 2025 թ. նոյեմբերի 20-21-ը: |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032340
ՀՎՀՀ 02505554

_______________________
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Ութսորս» ՍՊԸ
ք. Երևան, Սարմենի փող. 1, 2/1 տարածք
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 163007079839
ՀՎՀՀ 02639627

_______________________
(ստորագրություն)

Կ.Տ.

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**
**Համաժողովների կազմակերպման ծառայությունների**

«Հայ մշակույթի գործիչներ» համագումարը նախատեսվում է կազմակերպել 2025 թ. նոյեմբերի 20-21-ը՝ ք.Երևան «Կենտրոն» վարչական շրջանում գտնվող մշակութային վայրում (թատրոն, կինո, պատկերասրահ և այլն) կամ հյուրանոցային տարածքում:

Նախատեսվում է առավելագույնը 250 մասնակից, որից՝

- 100 մասնակից Հայաստանից
- 150 մասնակից սփյուռքից

Բացման և փակման արարողություններին նախատեսվում է՝ առավելագույնը՝ 300 անձի համար

Համագումարի քննարկումների համար նախատեսվում է ունենալ 3 պանելային նիստ, որից 1-ը՝ համագումարի առաջին օրը, հաջորդ օրը՝ տարբեր ժամերին, երկու պանելային նիստ:

Համագումարի առաջին օրվա երկրորդ կեսին՝ թեմատիկ սեմինարներ, աշխատարաններ և վարպետության դասնթացներ, երկու ցուցահանդես կարճամետրաժ ֆիլմի ցուցադրություն: Համագումարի երկրորդ օրը՝ 2 աշխատաժողով (Workshop) ձևաչափով (զուգահեռ դահլիճներում), աշխատանքային (B2B) հանդիպումներ:

Բոլոր դահլիճներ/սրահները պետք է տեղակայված լինեն նույն վայրում:

Ընդհանուր առմամբ անրաժեշտ է լինելու՝

- 1 դահլիճ պանելային քննարկումների համար՝ առնվազն 250 անձի համար:
- 2 դահլիճ աշխատաժողովների (Workshop) համար՝ յուրաքանչյուրն առնվազն 130 անձի համար:
- 4 դահլիճ սեմինարների համար (աշխատարաններ և վարպետության դասնթացներ, ցուցադրություններ)՝ յուրաքանչյուրը 50-70 անձի համար:
- 2 սրահ ցուցահանդեսների համար՝ յուրաքանչյուրը 70-100 անձի համար:
- 2 դահլիճ/սրահ՝ բացման և փակման հանդիսավոր արարողությունների համար՝ յուրաքանչյուրը 300 անձի համար:
- 1 սրահ ճաշի և սուրճի ընդմիջումների համար (տարածքը նախատեսված առնվազն 250 անձի համար / առնվազն 400 քմ. )
- 2 համապատասխան տարածք մասնակիցների գրանցումների համար,
- դահլիճների համապատասխան նախասրահներ,
- Նկարահանումների պատի (Photo Zone) համար տարածք,
- «Բարի գալուստ (Welcome zone) գոտի,
- 1 սրահ՝ մամլո ասուլիսի անցկացման համար,
- 1 սրահ՝ աշխատանքային (B2B) հանդիպումների համար:

Մշակութային միջոցառումների ձևաչափ

- ցուցահանդես,
- ցուցադրություններ,
- դասական երաժշտության համերգներ,
- ազգային երգի ու պարի կատարումներ,
- Արվեստի ձեռնարկի՝ «Ուղերձների խճանկար»-ի ստեղծում:

Համագումարը նպատակն է՝

- նպաստել Հայաստան–սփյուռք և միջազգային մշակութային համագործակցության կայուն զարգացմանը.
- աջակցել հայազգի արվեստի գործիչների միջև փոխադարձ ճանաչելիության մակարդակի բարձրացմանը.
- աջակցել մշակութային քաղաքականության մշակման և իրականացման ներառական գործընթացին՝ սփյուռքի մասնագետների մասնակցությամբ.

- փոխանակել լավագույն փորձերը մշակութային կրթության, հաղորդակցության, մշակութային դիվանագիտության, թվայնացման ոլորտներում՝ հետագա աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով:

Ակնկալվող արդյունքներ

- Հայաստանի և սփյուռքի մշակութային դերակատարների միջև մշակութային համագործակցության շարունակական հարթակի ձևավորում:
- Մշակութային կրթության, մշակութային դիվանագիտության և նորարար տեխնոլոգիաների ոլորտներում միջազգային լավագույն փորձի ներկայացում՝ հետագա գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:
- Առաջարկների «գաղափարների քարտեզ»-ի մշակում՝ ուղղված մշակութային քաղաքականության և ծրագրերի կատարելագործմանն ու իրականացմանը:

**1.** Բացում

1.1 2025 թ. նոյեմբերի 20-ին, այդ թվում՝

- Բացման հանդիսավոր արարողություն
  Անցկացման վայրը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ
- մասնակիցների գրանցում,
- բացման ողջույնի կարճ ելույթ,
- բարի գալուստի հյուրասիրություն (գինի, շամպայն),
- ֆուրշետ հյուրասիրություն, ինչպես նաև կենդանի դասական երաժշտություն (առնվազն 1.5 ժամ տևողությամբ),

1.2 Դահլիճի տեխնիկական հագեցվածության ապահովում և սպասարկում:

- Բեմահարթակ՝ բեմ–ֆերմա լույսերով, բարձրախոսներով (դինամիկներով)՝ չափսերին համապատասխան), հագեցած երաժշտական գործիքներով՝ կենդանի կատարումների և նվագախմբերի համար անհրաժեշտ ձայնային (ակուստիկ) հզորությամբ, անհրաժեշտ սարքավորումներով՝ տարածքի համապատասխան:
- Տարածք/դահլիճի լուսավորության և լուսային էֆեկտների ապահովում (էլեկտրաէներգիայի անհրաժեշտ հզորության և սնուցման համակարգով, ինչպես նաև լեդ էկրանների ապահովում, լուսատու սարքեր, լույսի կառավարման վահանակներ, ձայնային կառավարման համակարգ և մոնիտորներ, ձայնային խլացուցիչներ, էլեկտրաէներգիայի կարգավորման և ապահովման տրանսֆորմատորներ, գեներատորներ, ջեռուցման համակարգի ապահովում, առնվազն 1 սերվեր՝ էկրանների սպասարկման համար՝ ալյումինե կոնստրուկցիաներով՝ ամրացնելու համար, էլեկտրական ճախարակներ, տարբեր չափսի և հզորության լուսարձակներ, առնվազն 3 մոնիտոր, առնվազն 4 անլար միկրոֆոն լրակազմով, ձեռքի և հենակի վրա տեղադրված միկրոֆոններ և դինամիկներ՝ տարածքի համապատասխան:
- Գերարագ ինտերնետային կապի (WiFi) ապահովում:

2. Համագումարի քննարկումների և միջոցառումների անցկացման դահլիճների վարձակալություն, այդ թվում՝

Երեք պանելային նիստ, որոնցից մեկը նախատեսվում է 2025 թ. նոյեմբերի 20-ին իսկ երկուսը՝ նոյեմբերի 21-ին:

Երկու աշխատաժողովներ, որոնք նախատեսվում են 2025 թ. նոյեմբերի 21-ին:

Յոթ ուղղություններով սեմինարներ (վարպետության դասընթացներ, աշխատարաններ, ցուցադրություններ): Նախատեսվում են 2025 թ. նոյեմբերի 20-ին:

Ցուցահանդես՝

- գրքերի ցուցահանդես / ներկայացումներ
- զարդարվեստի ցուցանադես

2.1 Դահլիճների բրենդավորում, կահավորում և ձևավորում, այդ թվում՝

Պանելային նիստերի դահլիճի բրենդավորում, կահավորում և ձևավորում՝ 2-օրյա համաժողովի ձևաչափին համապատասխան, որը ներառում է նաև բեմահարթակ, բեմահրթակի ձևավորում, առնվազն 2 ամբիոն, առնվազն 6 բազկաթոռ, առնվազն 6 տումբա, 1 հատ կահավորված սեղան, առնվազն 4 Հայաստանի Հանրապետության դրոշ (դրոշաձողով և պատվանդանով):

Բեմարաթակը պետք է լինի առնվազն 35 քմ (մոդուլներով, նյութը՝ լամինատե ԴԱՊ-ով, առնվազն 18 մմ հաստությամբ, առնվազն 4 լուսային արկղեր՝ 35 գծամետր), ունենա բանախոսների համար առնվազն 1 ամբիոն (նյութը՝ լամինատե ԴԱՊ-ով, գույնը նախապես համաձայնեցնել):

Դահլիճների սրահները և ճեմասրահները և պետք է կահավորված լինեն Համագումարի բաններներով, սքռոլերներով, ցուցապաստառներով (ռոլափ) և

ցուցանակներով:

Աշխատաժողով» (Workshop) ձևաչափով քննարկումների համար նախատեսված դահլիճների բրենդավորում, կահավորում և ձևավորում, որը ներառում է յուրաքանչյուր սրահում 1 ձևավորված բեմահարթակ, առնվազն 1 ամբիոն, առնվազն 5 բազկաթոռ, առնվազն 5 տումբա, առնվազն 4 Հայաստանի Հանրապետության դրոշ (դրոշաձողով և պատվանդանով):

Բեմարաթակները պետք է լինեն առնվազն 35 քմ (մոդուլներով, նյութը՝ լամինատե ԴԱՊ-ով, առնվազն 18 մմ հաստությամբ, առնվազն 4 լուսային արկղեր՝ 35 գծամետր), ունենա բանախոսների համար առնվազն 1 ամբիոն (նյութը՝ լամինատե ԴԱՊ-ով, գույնը նախապես համաձայնեցնել):

Դահլիճների սրահները պետք է կահավորված լինեն Համագումարի բաններներով, սքռոլերներով, ցուցապաստառներով (ռոլափ) և ցուցանակներով:

Սեմինարների (վարպետության դասընթացներ, աշխատարաններ) համար դահլիճների բրենդավորում, կահավորում և ձևավորում, որը ներառում է նաև յուրաքանչյուր սրահում առնվազն 1 ամբիոն, առնվազն 3 բազկաթոռ, առնվազն 3 տումբա և 1 հատ կահավորված սեղան:

Բազկաթոռների, աթոռների, պուֆիկների և բազմոցների պաստառի նյութ՝ կաշվին փոխարինող, կարկաս՝ մետաղյա, գույնը՝ նախապես համաձայնեցնել:

Բաններները, դեկորացիաները, վարագույրները, հատակի ծածքը, ինչպես նաև լուսային սարքավորումները՝ համապատասխան մեծ դահլիճի չափսերին:

Դահլիճների սրահները պետք է կահավորված լինեն Համագումարի բաններներով, սքռոլերներով, ցուցապաստառներով (ռոլափ) և ցուցանակներով:

Աշխատարանների համար անհրաժեշտ է լինելու նաև կտավ (60x70 սմ, կտավի վրա նկարելու հարմար համապատասխան ներկանյութեր, մոլբերտ, գոնչար, կավանյութ):

Ցուցահանդեսների սրահների բրենդավորում, կահավորում և ձևավորում: Ցուցահանդեսների սրահները և ճեմասրահները պետք է կահավորված լինեն համագումարի բաններներով, սքռոլերներով, ցուցապաստառներով (ռոլափ) և ցուցանակներով: Սրահներում պետք է լինեն Համագումարի բրենդավորմամբ սեղաններ՝ առնվազն 8 հատ (առնվազն 0.85-0.90 սմ. բարձրությամբ, առնվազն 1.5 մ. երկարությամբ,) և 20 աթոռ:

Նկարահանումների պատը (Photo Zone) և տարածքը պետք է ունենա խամբային՝ առնվազն 50 անձի համար նկարահանվելու համար համապատասխան տարածք: Նկարահանումների պատը պետք է ունենա համապատասխան բաներ (առնվազն 2.5 x 3 մ), որի վրա պետք է տպագրված լինի համագումարի լոգոն, կազմակերպիչների և աջակիցների անվանումները, լոգոնորը, մասաթվերը և համագումարին առնչվող այլ մանրամասներ:

«Բարի գալուստ (Welcome zone) գոտին պետք է կահավորված լինեն համագումարի բաններներով, սքռոլերներով, ցուցապաստառներով, ցուցանակներով:

3. Դահլիճների տեխնիկական հագեցվածության ապահովում, այդ թվում՝

3.1 Պանելային նիստերի և «Աշխատաժողով» (Workshop) ձևաչափով քննարկումների համար դահլիճների, սրահների, ինչպես նաև ամբողջ տարածքի տեխնիկական հագեցվածության ապահովում/ձայնային և ակուստիկ տեխնիկա, լուսային սարքավորումներ, ԼԵԴ էկրաններ, մետաղական կոնստրուկցիաներ, մոնիտորներ:

Նախատեսում է առնվազն 10 լուսատու սարք, LED լուսատու, հզորությունը(Վտ)՝ առնվազն 70W կամ համարժեքը, առնվազն 4 լույսի կառավարման վահանակ, ձայնային համակարգ, ձայնի կառավարման մոնիտորներ, ձայնի խլացուցիչներ, էլեկտրոէներգիայի կարգավորման, ապահովման տրանսֆորմատորներ, գեներատորներ, օդափոխման համակարգի ապահովում: Համապատասխան վարձակալված դահլիճներում LED էկրանների ապահովում՝ առնվազն 50 ք.մ., 3-5 մմ. կետայնությամբ, առնվազն 1 սերվեր՝ էկրանների սպասարկման համար, ալյումինե կոնստրուկցիաներ՝ առնվազն 50 գծամետր, ամրացնելու համար, առնվազն 8 էլեկտրական ճախարակներ, առնվազն 10 տարբեր չափսի և հզորության լուսարձակներ, առնվազն 3

հեռուստացույց, առնվազն 10 անլար միկրոֆոն լրակազմով, ձեռքի և հենակի վրա տեղադրված միկրոֆոններ և առնվազն՝ 8 դինամիկ):

Դահլիճներում պետք է լինեն նաև մոնիտորներ՝ յուրաքանչյուրում առնվազն 3 հատ (առնվազն 45 դյույմ), երեք խոսափող (միկրոֆոններ):

- Կատարողը պետք է ապահովի վերոնշյալ բոլոր դահլիճներում և/կամ սրահներում լսարանի հետ փոխգործակցության հարթակ (Slido - Audience Interaction Made Easy) և առցանց ուղիղ հանդիպումների համար՝ յուրաքանչյուր սրահում՝ առնվազն 250 մասնակցի համար:
- Կատարողը պետք է ապահովի բոլոր դահլիճներում՝ Պատվիրատուի պահանջի ներկայացմամբ, օրերի ընթացքում «Zoom» կապի միացման հնարավորություն՝ առցանց հանդիպումներ կազմակերպելու նպատակով:
